

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱԳՆ ՊԱԾ-ԿԱԾՁԲ-12/02**

ք. Երևան

«12» փետրվար 2018 թ.

ՀՀ ԱԳՆ «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալությունը, գործակալության պետ Ա. Եգանյանի, որը գործում է գործակալության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Հովսեփյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին :

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Տրանսպորտային ծառայությունների» մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 478000 (չորս հարյուր յոթանասունութ հազար) ՀՀ դրամ, :

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով¹:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

¹ Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հարկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:²

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության

² Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:³

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ քացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՅՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

պատվիրատու	Կատարող
ՀՀ ԱԳՆ «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալություն Ք. Երևան, Վ.Սարգսյան 3 ՀՀ ՖՆ գործառնական վաճառություն Հ/Հ 900011291052 ՀՎՀՀ 02545976 Ա.Եգանյան	Կարկումավտո սերվիս ԱՊԸ ք. Երևան, Ն.Տիգրանյան 1 փակուղի 1 «ԷՆԷ ԵՍ ԲԻ ՍԻ Բանկ Հայաստան» ՓԲԸ Հ/Հ 217002121630001 ՀՎՀՀ 00131374 Էլ. հասցեն՝ sto.karcumauto@rambler.ru Համ. 10101249640 Ա. Հոստեմիյան

³ Եթե պայմանագիրը կնքվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության հիմքով, ապա սույն կետից հանվում է 2-րդ նախադասությունը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Ղրամ»

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/«Ղրամ»	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	50111170/1	ավտոմեքենաների պահպանման ծառայություններ	ղրամ	478000	1	Ք.Երևան,	15.12.2018
NN	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայտոլերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) ըստ չափաբաժինների ²					
		5 տեղ անցիկ տանող Toyota Corola 2007թ (Տոյոտա Կորոլա)	5 տեղ անցիկ տանող 2012թ Renault Fluence (Ռենո Ֆլուենս)				
		Այլ պետությունների արտադրանք (Գերմանական, Ճապոնական և Հարավ Կորեական արտադրության ավտոմեքենաներ)					
1	2		3			4	
SU-1 ներառվող ծառայությունների անվանում							
1	Բոնկման համակարգի ստուգում			100			100
2	Ստեղծման համակարգի ստուգում			100			100
3	Յուղման համակարգի ստուգում			100			100
4	Արտացման համակարգի ստուգում			100			100
5	Կցորդման համակարգի ստուգում			100			100
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում			100			100
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում			100			100
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում			100			100
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում			100			100
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում			100			100
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում			100			100
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում			100			100
13	ABS համակարգի ստուգում			100			100
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում			100			100
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում			100			100
16	Թափքի վիճակի ստուգում			100			100
17	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում			100			100
SU-2 ներառվող ծառայությունների անվանում							
18	Շարժիչի հանում և տեղադրում			15,000			15,000
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում			100			100
20	Նույնը կոնդիցիոների դեպքում			100			100
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում			100			100

22	Շարժիչի վերանորոգում	80,000		80,000
23	Նույնը DOHC դեպքում	100		100
24	Նույնը V6-ի դեպքում	100		100
25	Շարժիչի բարձրիկի հանում և տեղադրում	5,000		5,000
26	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	5,000		5,000
27	Նույնը աջի համար (V6)	100		100
28	Նույնը ձախի համար (V6)	100		100
29	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	25,000		25,000
30	Նույնը աջի համար (V6)	100		100
31	Նույնը ձախի համար (V6)	100		100
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	3,000		3,000
33	Շարժիչի գլխիկի վերանորոգում	18,000		18,000
34	Փականի խցուկի փոխարինում	2,000		2,000
35	Նույնը V6-ի դեպքում	100		100
36	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	3,000		3,000
37	Նույնը V6-ի ձախի դեպքում	100		100
38	Նույնը V6-ի աջի դեպքում	100		100
39	Նույնը DOHC դեպքում	100		100
40	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	5,000		5,000
41	Հրիչների փոխարինում SOHC	2,000		2,000
42	Նույնը DOHC դեպքում	100		100
43	Ատամնավոր փոկի փոխարինում	100		100
44	Նույնը DOHC դեպքում	100		100
45	Նույնը V6-ի դեպքում	100		100
46	Ծնկածև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	5,000		5,000
47	Նույնը կոնդիցիոների դեպքում	100		100
48	Նույնը DOHC դեպքում	100		100
49	Նույնը կոնդիցիոների դեպքում	100		100
50	Նույնը V6-ի դեպքում	100		100
51	Նույնը կոնդիցիոների դեպքում	100		100
52	Ծնկածև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	5,000		5,000
53	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	100		100
54	Մխոցային օդակների փոխարինում	15,000		15,000
55	Նույնը DOHC դեպքում	100		100
56	Նույնը V6-ի դեպքում	100		100
57	Թափանիվի հանում և տեղադրում	1,000		1,000
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
58	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	2,000		2,000
59	Յուղի պոմպի փոխարինում	5,000		5,000
60	Նույնը DOHC դեպքում	100		100
61	Նույնը V6-ի դեպքում	100		100
62	Ղեկավարման բլոկի վերանորոգում	30,000		30,000
63	Բռնկման կարգավորում	100		100
64	CO կարգավորում	100		100
65	Խարնարակի հանում և տեղադրում	100		100
66	Խարնարակի վերանորոգում	100		100
67	Օդի գտիչի փոխարինում	1,000		1,000
68	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	5,000		5,000
69	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	18,000		18,000
70	Բենզամոդիչի փոխարինում	9,600		9,600
71	Վառելիքի գտիչի փոխարինում	3,000		3,000
72	Վառելիքի բացի հանում և տեղադրում	1,000		1,000
73	Տրամյորի հանում և տեղադրում	100		100
74	Տրամյորի վերանորոգում	100		100
	3. Սառեցման և արտածման համակարգ			
75	Հովհարի փոկի հանում և տեղադրում	500		500
76	Հովհարի հանում և տեղադրում	3,000		3,000
77	Ռադիատորի հանում և տեղադրում	5,000		5,000
78	Նույնը կոնդիցիոների դեպքում	100		100
79	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	100		100

80	Ռադիատորի վերանորոգում	18,000		18,000
81	Թերմոստատի փոխարինում	5,000		5,000
82	Ջրի պոմպի փոխարինում	8,000		8,000
83	Նույնը DOHC և V-6 դեպքում	100		100
84	Նույնը կոնդիցիոների դեպքում	100		100
85	Ջրի պոմպի վերանորոգում	100		100
86	Նույնը DOHC դեպքում	100		100
87	Նույնը կոնդիցիոների դեպքում	100		100
88	Ընդարձակող բացի փոխարինում	1,000		1,000
89	Խլարարի հանում և տեղադրում	5,000		5,000
90	Նույնը DOHC դեպքում	100		100
91	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	2,000		2,000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ				
92	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	5,000		5,000
93	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	100		100
94	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	10,000		10,000
95	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	1,000		1,000
96	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	1,000		1,000
97	ՓՏ-ի հանում և տեղադրում	25,000		25,000
98	ՓՏ-ի վերանորոգում	25,000		25,000
99	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	3,000		3,000
100	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	3,000		3,000
101	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	1,000		1,000
102	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	15,000		15,000
103	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	15,000		15,000
104	Նույնը V6-ի համար	100		100
105	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	35,000		35,000
106	Նույնը V6-ի համար	100		100
107	ԱՓՏ-ի վերանորոգում	100,000		100,000
108	Նույնը V6-ի համար	100		100
109	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	10,000		10,000
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ				
110	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	100		100
111	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	100		100
112	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	100		100
113	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	100		100
114	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով	100		100
115	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	100		100
116	Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում	100		100
6. Առջևի և հետևի կամրջակներ				
117	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	100		100
118	Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում	100		100
119	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	100		100
120	Առջևի կամ հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում	100		100
121	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	100		100
7. Կախոց				
122	Առջևի կախոցի լիկատար քանդում և հավաքում	5,000		5,000
123	Տրավերսի հանում և տեղադրում	3,000		3,000
124	Ձախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում	5,000		5,000
125	Անվակունդի առանցքակալի փոխարինում	5,000		5,000
126	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	100		100
127	Հետևի անվակունդի առանցքակալի	5,000		5,000

	փոխարինում			
128	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	100		100
129	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	3,000		3,000
130	Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	1,000		1,000
131	Տնցամեղմիչի թասակի փոխարինում	5,000		5,000
132	Ձապանակի հանում և տեղադրում	3,000		3,000
133	Ձապակի հանում և տեղադրում	100		100
134	Ձապակի վռանների փոխարինում	100		100
135	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	5,000		5,000
136	Ներքևի լծակի հանում և տեղադրում	4,500		4,500
137	Ներքևի լծակի վռանների փոխարինում	3,000		3,000
138	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	3,000		3,000
139	Միջին ձգանի հանում և տեղադրում	100		100
140	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	100		100
141	Վերևի լծակի հանում և տեղադրում	100		100
142	Վերևի լծակի վռանների փոխարինում	100		100
143	Գնդե հողակապերի փոխարինում	4,000		4,000
144	Ծայրականների հանում և տեղադրում	3,000		3,000
145	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	3,000		3,000
146	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	3,000		3,000
147	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	1,000		1,000
148	Հետևի զսպանակի փոխարինում	4,000		4,000
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	4,000		4,000
150	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	100		100
151	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	100		100
152	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	4,000		4,000
153	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	100		100
154	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	100		100
155	Անվարացքի կարագավորում	5,000		5,000
156	Ձողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	1,000		1,000
	8. Ղեկային մեխանիզմ			
157	Ղեկային կայունի հանում և տեղադրում	8,000		8,000
158	Նույնը V6-ի համար	100		100
159	Ղեկային կայունի վերանորոգում	15,000		15,000
160	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	100		100
161	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	100		100
162	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	100		100
163	Նույնը DOHC դեպքում	100		100
164	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	3,000		3,000
165	Նույնը DOHC դեպքում	100		100
166	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	100		100
167	Նույնը DOHC դեպքում	100		100
168	Նույնը կոնդիցիոների դեպքում	100		100
169	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	100		100
170	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	100		100
	9. Արգելակային համակարգ			
171	Գլխ. գլանի հանում և տեղադրում	5,000		5,000
172	Գլխ. գլանի վերանորոգում	100		100
173	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	5,000		5,000
174	Բանվ. գլանի հանում և տեղադրում	100		100
175	Բանվ. գլանի վերանորոգում	100		100
176	Արգելակային համակարգի օդահանում	1,000		1,000

177	Առցիկ սուպպորտի հանում և տեղադրում	3,000		3,000
178	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	3,000		3,000
179	Առցիկ սուպպորտի վերանորոգում	100		100
180	Հետևի սուպպորտի վերանորոգում	100		100
181	Արգելակային փողոսակի փոխարինում	3,000		3,000
182	Առցիկ արգելակային կոճղակների փոխարինում	4,000		4,000
183	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	4,000		4,000
184	Հետևի կոճղակների փոխարինում	4,000		4,000
185	Առցիկ արգելակային սկավառակի փոխարինում	4,000		4,000
186	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	4,000		4,000
187	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	1,000		1,000
188	ABS-ի հանում և տեղադրում	8,000		8,000
189	ABS-ի վերանորոգում	8,000		8,000
190	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	3,000		3,000
191	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	3,000		3,000
10. Էլեկտրասարքավորում				
192	Էլեկտրասարքավորման վերանորոգում	10,000		10,000
193	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	8,000		8,000
194	Գններատորի հանում և տեղադրում	6,000		6,000
195	Նույնը V6-ի դեպքում	100		100
196	Նույնը հիդրոուձեղարարի դեպքում	100		100
197	Գններատորի վերանորոգում	10,000		10,000
198	Մեկնարկիչի հանում և տեղադրում	6,000		6,000
199	Մեկնարկիչի վերանորոգում	10,000		10,000
200	Առցիկ յապտերի հանում և տեղադրում	3,600		3,600
201	Հետևի յապտերի հանում և տեղադրում	3,000		3,000
202	Բոնկման կողպեքի հանում և տեղադրում	7,000		7,000
203	Վազքաչափի հանում և տեղադրում	3,000		3,000
204	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	3,000		3,000
205	Սաքերի պանելի հանում և տեղադրում	8,000		8,000
206	Արագաչափի հանում և տեղադրում	2,000		2,000
207	Ազդանշանի հանում և տեղադրում	2,000		2,000
208	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում	4,800		4,800
209	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	5,000		5,000
210	Ազդանշային համակարգի տեղադրում	25,000		25,000
211	Մագնիստոյալի տեղադրում	5,000		5,000
212	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	3,600		3,600
213	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	15,000		15,000
214	Էլ/հաղորդալարերի հիմնական խտրոցի հանում և տեղադրում	20,000		20,000
215	Էլ/հաղորդալարերի երկրորդային խտրոցի հանում և տեղադրում	10,000		10,000
216	Էլեկտրական տվիչների փոխարինում	1,000		1,000
217	Էլեկտրական անջատիչների փոխարինում	1,000		1,000
218	Վառոցքի մոմերի փոխարինում	6,000		6,000
219	Կոնդիցիոների լիցքավորում	20,000		20,000
220	Կոնդիցիոների վերանորոգում	15,000		15,000
11. Այլ ծառայություններ				
221	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում	3,600		3,600
222	Ավտոմեքենայի լվացում	3,600		3,600
223	Անիվի հանում և տեղադրում	1,200		1,200
224	Անվաղողի վերանորոգում	1,200		1,200
225	Անիվի քայանսավորում	1,200		1,200
226	Անիվի վալց	6,000		6,000
227	CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	1,200		1,200
228	Խառատային աշխատանքներ	1,200		1,200

229	Փականագործի աշխատանքներ	1,200		1,200
230	Քարշարկի ծառայություն զին նկմ. համար	500		500
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Չափաբաժին 1 5 տեղ առցանց տանող Toyota Corola 2007թ (Տոյոտա Կորոլա)		Չափաբաժին 2 5 տեղ առցանց տանող 2012թ Renault Fluence (Ռենո Ֆլուենս)
	1. Շարժիչ			
1	Շարժիչի բլոկ	20,000		5,000
2	Շարժիչի գլխիկ	20,000		5,000
3	Բարձիկ	30,000		2,000
4	Շարժիչի գլխիկի միջադիր	15,000		10,000
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	1,000		8,000
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	10,000		14,000
7	Շարժիչի փական դուրս մղող	5,000		18,000
8	Շարժիչի փական ներս մղող	5,000		14,000
9	Շարժիչի փականի խցուկ	2,000		3,000
10	Ծնկածն լիսեռ	10,000		10,000
11	Ծնկածն լիսեռի խցուկ առցանց	8,000		25,000
12	Ծնկածն լիսեռի խցուկ հետևի	14,000		10,000
13	Ծնկածն լիսեռի արմատական ներդիրներ	20,000		22,000
14	Ծնկածն լիսեռի շարժաթևային ներդիրներ	16,000		20,000
15	Հենակային տափողակ	3,000		12,000
16	Մխոց	10,000		4,000
17	Մխոցային օղակներ	25,000		5,000
18	Ատամնանիվ	10,000		5,000
19	Ատամնավոր փոկ	1,000		1,000
20	Շղթա	30,000		5,000
21	Հիդրոծգան	12,000		10,000
22	Հրիչ	4,000		6,500
23	Հիդրոհրիչ	5,000		3,000
24	Բաշմակ	5,000		10,000
25	Հանգստարար	1,000		3,000
26	Թափանիվ	5,000		3,000
27	Թափանիվի պսակ	10,000		5,000
28	Խցուկ բաշխիչ լիսեռի	6,500		5,000
29	Շկիվ	3,000		2,000
30	Շարժաթև	10,000		10,000
31	Կարտերի միջադիր	3,000		8,000
32	Միջադիր	3,000		14,000
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
33	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	2,500		2,500
34	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	4,000		4,000
35	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	6,000		6,000
36	Յուղի գտիչ	7,000		7,000
37	Յուղի պոմպ	15,000		15,000
38	Յուղի պոմպի շարժաթև	1,000		1,000
39	Յուղի ռադիատոր	1,000		1,000
40	Յուղի փողրակ	1,000		1,000
41	Յուղի ծորակ	1,000		1,000
42	Վառոցքի մոմ	6,000		6,000
43	Բենզոլաք	4,000		4,000
44	Խառնարակ	100		100
45	Խառնարակի վերանորոգման հավաքածու	100		100
46	Ինժեկտորի ֆորսունկա	10,000		10,000
47	Վառելանյութի մղիչ էլեկտրական	38,000		38,000
48	Վառելանյութի մղիչ մեխանիկական	100		100
49	Վառելանյութի գտիչ	10,000		10,000
50	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	100		100
51	Վառելանյութի փողրակ	3,000		3,000
52	Աքսելերատորի ճուպան	4,000		4,000
53	Օդի գտիչ	11,000		11,000

54	Ջերմաստիճանային տվիչ	100	100
55	Յուղի տվիչ	11,000	11,000
56	Բաշխիչ լիսեռի տվիչ	15,000	15,000
57	Օդի ծախսի տվիչ	1,000	1,000
58	Արագաչափի տվիչ	1,000	1,000
59	Հովհարի տվիչ	4,000	4,000
60	Ջրի տվիչ	1,000	1,000
61	Բենզոլրաքի տվիչ	7,000	7,000
62	Մարման ընթացքի կարգավորիչ	1,000	1,000
63	Մարման ընթացքի տվիչ	1,000	1,000
64	Ղեկավարման համակարգիչ	60,000	60,000
65	Պարապ ընթացքի տվիչ	1,000	1,000
66	Դրոսելային փականի տվիչ	8,000	8,000
67	Թթվածնի տվիչ	1,000	1,000
	3. Սառեցման և արտաձման համակարգ		
68	Հովհարի փոկ	15,000	15,000
69	Հովհար	15,000	15,000
70	Ռադիատոր	90,000	90,000
71	Ընդարձակող բաք	8,000	8,000
72	Ռադիատորի փողրակ	1,000	1,000
73	Թերմոստատ	14,400	14,400
74	Ջրի պոմպ	15,000	15,000
75	Ջրի պոմպի առանցքակալ	100	100
76	Ջրի պոմպի թևակ	100	100
77	Սառեցման հեղուկ 1 լիտր	2,000	2,000
78	Ջրի պոմպի տեսնիվ	100	100
79	Հոլովակ	1,000	1,000
80	Փոկ	100	100
81	Փոկ կոնդիցիոների	100	100
82	Ծորակ	100	100
83	Խլարարի ներդիր	100	100
84	Խլարարի կախոց	3,000	3,000
85	Կրոնշտեյն	1,000	1,000
86	Անուր (Խամուս)	600	600
87	Խլարար	5,000	5,000
88	Ռեզոնատոր	5,000	5,000
89	Վառարանի ռադիատոր	30,000	30,000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
90	Կցորդման բանվորական գլան	8,000	8,000
91	Կցորդման գլխավոր գլան	10,000	10,000
92	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	100	100
93	Կցորդման տանող սկավառակ	65,000	60,000
94	Կցորդման տարվող սկավառակ	50,000	45,000
95	Կցորդման առանցքակալ	25,000	20,000
96	Կցորդման փողրակ	100	5,000
97	Փոխանցման տուփ	100,000	100,000
98	ՓՏ-ի առջևի խցուկ	3,000	3,000
99	ՓՏ-ի հետևի խցուկ	5,000	5,000
100	ՓՏ-ի առանցքակալ	5,000	4,000
101	ՓՏ-ի առաջնային լիսեռ	10,000	10,000
102	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	10,000	10,000
103	ՓՏ-ի եղանիկ	5,000	5,000
104	ՓՏ-ի առամնանիվ	9,000	8,000
105	Համաժամիչ	4,000	4,000
106	Մուֆտ	9,000	8,000
107	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	100	100
108	ԱՓՏ-ի զտիչ	19,000	17,000
109	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	90,000	90,000
110	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	60,000	60,000
111	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	3,000	3,000
112	ԱՓՏ յուղ, 1 լիտր	5,000	5,000

113	ՓՏ-ի առաջնային լիսեռ	100	100
114	Հերմետիկ	2,000	2,000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
115	Բաշխիչ տուփ	100	100
116	Բաշխիչ տուփի խցուկ	100	100
117	Բաշխիչ տուփի առանցքակալ	100	100
118	Բաշխիչ տուփի ատամնանիվ	100	100
119	Բաշխիչ տուփի լիսեռ	100	100
120	Կարդանային լիսեռ	100	100
121	Էլաստիկ մուֆտ	100	100
122	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	100	100
123	Կարդանային լիսեռի խաչուկ	100	100
	6. Աղջևի և հետևի կամրջակներ		
124	Հետևի կամ աղջևի կամրջակ	100	100
125	Ռեդուկտոր	100	100
126	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	100	100
127	Դիֆֆերենցիալ	15,000	13,000
128	Դիֆֆերենցիալի սատելլիտ	8,000	7,000
129	Տանող ատամնանիվի խցուկ	100	100
130	Տանող ատամնանիվի առանցքակալ	100	100
131	Դիֆֆերենցիալի առանցքակալ	4,000	4,000
132	Կիսաստնի	100	100
133	Կիսաստնու առանցքակալ	100	100
134	Կիսաստնու միջադիր	100	100
135	Կիսաստնու խցուկ	100	100
136	Կարգավորիչ տափողակ	100	100
	7. Կախոց		
137	Տրավերս	5,000	5,000
138	Կրոնշտեյն	1,000	1,000
139	Ձախ կամ աջ հողակալ	45,000	40,000
140	Ձախ կամ աջ հողակալի փոշեթիկնոց	8,000	5,000
141	Անվակունդ	20,000	20,000
142	Անվակունդի խցուկ	3,000	3,000
143	Անվակունդի ներքին առանցքակալ	20,000	18,000
144	Անվակունդի արտաքին առանցքակալ	100	100
145	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	18,000	16,000
146	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	100	100
147	Ձախ կամ աջ հողակալի խցուկ	5,000	5,000
148	Հարվածամեղմիչի թասակ	18,000	18,000
149	Չսպանակ	8,000	8,000
150	Աղջևի հարվածամեղմիչ	50,000	48,000
151	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	100	100
152	Հարվածամեղմիչի վրան	100	100
153	Ներքևի լծակ	20,000	15,000
154	Ներքևի լծակի վրան	7,200	7,200
155	Վերևի լծակ	100	100
156	Վերևի լծակի վրան	100	100
157	Գնդե հողակալ	14,000	14,000
158	Աղջևի կայունարար	5,000	5,000
159	Աղջևի կայունարարի վրան	6,000	6,000
160	Աղջևի կայունարարի աղջևի վրան	100	100
161	Հետևի զսպանակ	5,000	5,000
162	Հետևի ցնցամեղմիչ	35,000	35,000
163	Հետևի մետաղածող (շտանգա)	100	100
164	Հետևի մետաղածողի (շտանգա) վրան	100	100
165	Հետևի անկյունագծային լծակ	100	100
166	Անկյունագծային լծակի վրան	100	100
167	Չսպակ (ոնստրա)	100	100
168	Չսպակի վրան	100	100
169	Չսպակի միջադիր	100	100

170	Ձսպակի բոնիչ	100		100
171	Աջ կամ ձախ ձգան	12,000		12,000
172	Ծայրակալ	12,000		12,000
173	Ձգան մեջտեղի	100		100
174	Անվահեծ	10,000		10,000
	8. Ղեկային մեխանիզմ			
175	Ղեկային կալուն	45,000		40,000
176	Ղեկային կալունի առանցքակալ	100		100
177	Ղեկային կալունի խաչուկ	100		100
178	Հիդրոուժեղարար	100		35,000
179	Հիդրոուժեղարարի փոկ	100		100
180	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	100		100
181	Հիդրոուժեղարարի պոմպ	100		100
182	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	100		100
183	Ղեկային ձող	5,000		5,000
184	Ղեկային ձողի ծայրակալ	100		100
185	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	3,000		3,000
186	Ճոճանակ	100		100
187	Ճոճանակի վռան	100		100
	7. Արգելակային համակարգ			
188	Գլխ. գլան	15,000		15,000
189	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	100		100
190	Վակուումային ուժեղարար	15,000		15,000
191	Բանվ. գլան	100		100
192	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	100		100
193	Արգելակային փողրակ	4,500		4,500
194	Սուպպորտի ուղղորդիչ	4,000		4,000
195	Սուպպորտի մանժետ	1,000		1,000
196	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	30,000		30,000
197	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	28,000		28,000
198	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	30,000		30,000
199	Առջևի արգելակային սկավառակ	30,000		30,000
200	Հետևի արգելակային սկավառակ	30,000		30,000
201	Ձեռքի արգելակի ճուպան	5,000		5,000
202	ABS-ի տվիչ	10,000		10,000
203	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	3,000		3,000
204	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	2,000		2,000
205	Ձեռքի արգելակի ճուպան	100		100
	9. Էլեկտրասարքավորում			
206	Գններատոր	60,000		50,000
207	Գններատորի դիողային կամրջակ	20,000		18,000
208	Գններատորի ռեյե	15,000		13,000
209	Գններատորի առանցքակալ	4,000		4,000
210	Ստարտեր	50,000		45,000
211	Ստարտերի ռեյե	5,000		5,000
212	Ստարտերի ածուխ	5,000		5,000
213	Բենդեքս	13,000		11,000
214	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	14,000		13,000
215	Առջևի լապտեր	10,000		10,000
216	Առջևի թարթիչ	8,000		8,000
217	Հետևի լապտեր	10,000		10,000
218	Հետևի թարթիչ	5,000		5,000
219	Արգելակային լապտեր	2,000		2,000
220	Լամպ	5,000		5,000
221	Էլեկտրական անջատիչ	1,000		1,000
222	Էլեկտրական տվիչ	1,000		1,000
223	Էլեկտրական չափիչ սարք	3,000		3,000
224	Բռնկման կողպեք	10,000		10,000
225	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	15,000		15,000
226	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	10,000		10,000

227	Վառոցքային լարերի խուրց	100	100
228	Վառոցքի մոմի ծայրակալ	5,000	5,000
229	Վազքաչափ	100	100
230	Վազքաչափի ճոպան	5,000	5,000
231	Արագաչափ	5,000	5,000
232	Ազդանշան	3,600	3,600
233	Ապակեվազիչ	3,600	3,600
234	Ապակեվազիչի շարժիչ	5,000	5,000
235	Դռների կենտրոնական փական	5,000	5,000
236	Ազդանշային համակարգ	15,000	15,000
237	Մագնիտոլա	5,000	5,000
238	Էլեկտրաամբարձիչ	8,000	8,000
239	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	8,000	8,000
240	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորոգման համար	3,000	3,000
		Ծառայության մատուցման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
		Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետ	15.դեկտեմբեր 2018թ

<p style="text-align: center;">Պատվիրատու</p> <p>«ԱԳՆ «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալություն Բ. Երևան, Վ.Սարգսյան 3 «ՖՆ գործառնական վարչություն» Հ/Հ 900011291052 ՀՎՀՀ 02548976 Ա.Եգանյան (ստորագրություն) Կ.Տ.</p> 	<p style="text-align: center;">Կատարող</p> <p>Կարկումավտո սերվիս ՍՊԸ ք. Երևան, Ն.Տիգրանյան 1 փակուղի 1 «Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ Հ/Հ 217002121630001 ՀՎՀՀ 00131374 էլ. հասցեն՝ sto-karcomauto@rambler.ru Հեռ. 0103249640 Լ. Զոմեսիյան (ստորագրություն) Կ.Տ.</p> 
---	--

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

		Ծառայության													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111170/1	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություն	-	47800	47800	167300	167300	167300	286800	286800	286800	478000	478000	478000	478000

<p>Պատվիրատու ՀՀ ԱԳՆ «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալություն Ք. Երևան, Վ.Սարգսյան 3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011291052 ՀՎՀՀ 02545976 Ա.Եզանյան (ստորագրություն) Վ.Տ.</p>	<p>Կատարող Կարկոմավտո սերվիս ՍՊԸ ք. Երևան, Ն.Տիգրանյան 1 փակուղի 1 «Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ Հ/Հ 217002121630001 ՀՎՀՀ 00131374 էլ. հասցեն՝ sto-karcormauto@rambler.ru Հեռ.՝ 010/249640 Ա. Հովսեփյան (ստորագրություն)</p>
---	---

Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
 ՀԱՆՁՆԱՆ-ԸՆԴՈՒՄՆԱՆ

« » « » 2017 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
 Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____
 Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման և ժամկետը /ըստ վճարման և ժամանակացույցի /
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____ ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____ ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

զննան պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն